№ 5. Փետրվարի 8. — 1873 — Փետրվարի .8 № 5

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ՝

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցեով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянскаго Газеты „Мшакъ“.

Թեֆիսում կարելի է առորագրվիլ խմբագրատան մէջ (Արծրունու տան և պ. Թատուրեանցի խանութում։

ՄՇԱԿ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝

Մասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հատարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւններ տպվումեն Հայերէն, Ռուսերէն, Վրացերէն, Ֆրանսիարէն, Գերմաներէն և Թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչով են պարծենում մեր հարուստները։—Ներքին տեսութիւն։ Տարրական ուսումնարանների նախագիծը։ Նամակ Նուխուց։ Նամակ Ղզլարից։ Ներքին լուրեր։ — Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Նամակ Ցիւրիխից։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—Առևտրական։ — Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Մի ճանապարհորդութեան տպաւորութիւնները։

ԻՆՉՈՎ ԵՆ ՊԱՐԾԵՆՈՒՄ ՄԵՐ ՀԱՐՈՒՍՏՆԵՐԸ

Սովորութիւն կայ մեր հարուստ ծերերի մէջ, պատահելով իրանց որդիներին, որք օտար երկիրներից յետ են գալիս բարձր ուսումով, գառն կերպով յանդիմանութիւններ անելու, թէ ինչի նոր եկած որդին իսկոյն չէ կարողանում իր համար տապարէզ բացանել մեր հասարակութեան մէջ, չէ կարող առաջին օրից արդէն հասնել անկախ դրութեանը։ Բոլոր նրանց յանդիմանութիւնը այդ խօսքերի վրա է հիմնվում՝ „մի հինգ կոպէկ բերը օջախդ, այն ժամանակ կասեմ որ մարդ ես“։

Նախ քան արդարացնենք կամ մեղադրենք ուսեալ երիտասարդութիւնը, քննենք թէ ինչպէս են հարստացել մեր հարուստները, և արդեօք ունե՞ն նրանք իրաւունք պարծենալու։ Ինչպէս ամեն երկրում, նոյնպէս և մեզ մօտ, երկու միջոց կայ միայն հարստանալու՝ մինը ժառանգել մի հարստութիւն, միւսը աշխատանքով հարստանալ։ Առաջինների վրա մենք չենք էլ կամենում խօսել, որովհետև նրանք ժառանգութեամբ հարստացած լինելով, պատճառ չունին, չեն կարող և չեն էլ ասում իրանց որդիներին վերև յիշված խօսքերը...

Բայց այն հարստները, որք աշխատանքով են հարստացել, արդեօք իրաւունք ունեն այդ տեսակ խօսակցութիւն բռնել իրանց որդիների հետ, ու նրանց մեղադրել, որ հինգ կոպէկ անգամ աշխատել չեն կարող, ու օջախը բերել...

Այդտեղ զարթնում է մի հասարակական խնդիր՝ մենք չենք կամենում մեղադրել հին սերունդը, թէ նա մեծ մասամբ վատ կամ անաղնիւ ճանապարհներով է հարստացել,—ոչ, մենք կամենում ենք միայն հարցնել, կարո՞ղ ենք մենք արդեօք մի և նոյն միջոցներով հարստանալ, կամ գոնէ մեզ ապահովել, ինչպէս նրանք են արել...անկարելի է։ Ժամանակը ուրիշ էր, պահանջները ուրիշ էին, ուստի և միջոցները տարբեր պիտի լինեն։ Եթէ առաջ պատերազմական դրութեան մէջ էր երկիրը, իսկ այժմ խաղաղ դրութեան մէջ, եթէ առաջ բազմաթիւ զօրքի հարկաւորութիւն կար, իսկ այժմ հետզհետէ մտաւոր կեանքով ապրող մարդիկների մէջ պահանջէ զգացվում, եթէ իրանք հիմնարկութիւններ ուրիշ են, եթէ առաջ դատաւորները փակ էին, իսկ այժմ հրապարակական, եթէ առաջ երկրի բնական արդիւնքները միևին, երկուսին կապալով էին տալիս շահացնելու, իսկ այժմ նոյն արդիւնքի վերա հետզհետէ աճող անվանված հարկեր կը մացնվին, եթէ առաջ հարկատու էին միայն աշխատողները, իսկ հետզհետէ մացնվելու է, ասենք, հարկը մուտքից,—և այլն..... Եթէ, մի խօսքով ինքն անձնական և հասարակական դրութիւնը հետզհետէ փոխվում է,—հասկանալի է որ նոր սերունդը չէ կարող աշխատանքի և իրան ապահովացնելու գործի մէջ մի և նոյն ընթացքը բռնել, որին հետևում էր հին սերունդը։ Ինչով են պարծենում ուրեմն, և ի՞նչ իրաւունքով մեզ մեղադրում։ Մենք այնքան ենք աշխատում, մեզանից շատերը դուցէ մի տարվայ մէջ աւելի քան թէ հին մարդը իր ամբողջ կեանքումը,—բայց ինչո՞վ ենք մեղաւոր, որ հին պահանջները թողած, մեր հասարակութիւնը նորերի անհրաժեշտութիւնը դեռ չէ ճանաչում, ինչո՞վ ենք մեղաւոր, որ մօտիկ ապագայում միակ գործադրելի աշխատանքի ձևերը ընտրած, մենք այդ դեռ անորոշ ժամանակում, ամենաանտանելի աշխատանքով ոչ թէ միայն չենք կարող հարստանալ, բայց և չենք կարող մեզ ապահովել, այն ինչ նոյն աշխատանքը Եւրոպայում կարող էր մեզ համար ոչ թէ միայն ապահովութեան, բայց և հարստութեան աղբիւր լինել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԳԻԾ ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Շարունակութիւն) 1)

II

Տարրական կամ սկզբնական ուսումնարանի համար նախագիծ գցելուց առաջ օգտաւէտ կը լինէր որոշել՝ թէ առհասարակ ինչ նշանակութիւն ունի տարրական ուսումնարանը կամ սկզբնական դասատուները։ Այս դասատան մէջ պատրաստվում են միայն առաջին դասատուները մտնելու համար, թէ մի ուրիշ բանի համար էլ։ Մենք աւելի պատրաստ ենք համաձայնելու այն մտքի հետ, որ տարրական ուսումնարանը, բացի իւր պատրաստական նշանակութենից, ունի աւելի մեծ նշանակութիւն։ Հէնց տարրական անունը ինքն ըստ ինքեան ցոյց է տալիս այս։ Տարրականին գերմաներէն հիմնական էլ են ասում։ Ուրեմն տարրական ուսումնարանից պէտք է պահանջած, որ նա ընդհանրապէս կրթութեան հիմքը տայ աշակերտներին, տայ նոյնպէս և այն ընթացքը, որով ապագայում պէտք է առաջ գնայ նա դէպի բարձր կրթութիւնը և զարգացումը։ Տարրական կրթութիւնը համառօտ կերպիւ պէտք է ներկայացնէ մի ամբողջ, բազմակողմանի բան, որ պէտք է ընդարձակվի ապագայի կրթութիւնով։ Գերմանիայում և վերջին ժամանակներում Բարոն Կորֆի Ալէքսանդրովսկի գաւառի և ուսումնարաններում չքաւորութեան և ուրիշ պատճառներով շատ երեխաներ անցնում են միայն տարրական ուսումը (3—4 տարում), և նրանցից վերջերում դուրս են գալիս լուսաւորուած մշակներ և հողագործներ։ Մենք կարծում ենք, որ մեզ էլ հարկաւոր է այս նպատակը ունենալ մեր աչքի առաջը։

Տարրական ուսումնարանի նպատակը պէտք է լինի զարգացնել աշակերտների ընդունակութիւնը, ծանօթացնել նրանց որքան կարելի է նոր նրանց շրջապատող և նրանցից հեռու առարկաների հետ—միով բանիւ—տարրական ուսումնարանը պէտք է այ, թէ և քիչ, բայց որոշ գիտութիւն, աշակերտների հասակին համաձայն։

Այս նպատակին կարելի է հասնել յետագայ առարկաների դասաւորութիւնովը։

1) Մայրենի լեզուի ուսումնասիրութիւնը (կարդալ և գրել)։

2) Հաշիւ (մտաւոր և գրաւոր)։

3) Նկատողական (դիտողական) ուսում։

4) Նկարչութիւն և գծագրութիւն։

Նկատողութիւն. Տարրական ուսումնարանում—նախապատրաստական դասատան մէջ, երբ երեխան դեռ դժուարանում է իրան մայրենի լեզուով խօսել և մտածել, երբ նրա հասկացողութեան ասոյծանը շատ նեղ է, այս տարիներում մենք ամենաքաղաքակար ենք համարում մի որևիցէ օտարազգի լեզուի ուսումնասիրութիւնը։ Նրա հետևանքը լինում է այս տարիներում այն, որ երեխան բթամտանում է չը հասկանալով կարդացածը և ասածը, և այս լեզուի մէջ ոչինչ առաջադիմութիւն չի ցոյց տալի, բայց ընդհակառակը նա զզվում է այն լեզուից և վերջերում նա կամ ամենևին չէ ուսումնասիրում այն օգտաւէտ լեզուն, կամ շատ դժուարութիւնների է հանդիպում, մինչև որ իրան հաշտեցնում է նորան ուսումնասիրելով։ Լաւ է մի քանի տարի յետ թողնել մի որևիցէ օտար լեզուի ուսումնասիրութիւնը, և սկսել առաջին կամ երկրորդ դասատնից, քան թէ սկզբումը անհաշտ թշնամի շինել երեխային այդ լեզուի հետ և ատելութիւն զարգացնել նրա մէջ դէպի օտար լեզուն, որի ուսումնասիրութիւնը մեզ, աղքատ գրականութիւնով հայերիս

1) Տես „Մշակ“ № 4—1873։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

II

Հարցրէք Գերմանիայի մէջ ճանապարհորդած մի մարդուց, որ իր մէջ ունի մի փոքր զգացմունք դէպի բնութեան գեղեցկութիւնները, այս երկրի որ մասն է նորան աւելի գրաւել,—պատասխանը անկասկած կը լինի՝

„Հռէնոսի ափերը“։ Եւ յիրաւի կարելի է արդեօք մի առաւել բանաստեղծական և մի և նոյն ժամանակ այսպէս շնորհալի տեղ գտնել ամբողջ Գերմանիայումը։ Մայնց քաղաքումը նաև նստելով, կանցնէք ամենահարուստ, չքեղ երկիրներով՝ աջ ու ձախ խաղողով տնկած լերներ (Weinberg), որտեղից բոլոր երկրագնտի վերայ հռչակած Հռէնոսի սակեգոյն գինիներ են ծագում, աջ ու ձախ միայնացած ժայռերի վերայ կամ ծածուկ մի ձորակի մէջ ճանապարհորդի ուշադրութիւն գրաւող սմբոցների մնացորդներ, որոնց տեսնելով, ակամայ մտքի մէջ ծնվում են յիշողութիւններ միջին դարերի կեանքից, երբ այս ամրոցների մէջ, կայսերական օրէնքներից և հարկերից ազատասանվելով, դոցա տէրերը, ազնուական ասպետները, յարմար բսպէին սպասելով, ելանում էին, ճանապարհորդներին, մանաւանդ վաճառականներին և կայսերական հպատակներին կողոպտելու համար։

Աշխատանքը նոցա անծանօթ լինելով, ապրուստի միակ միջոցը պէտք է լիներ աւազակութիւնը և այս արուեստը աւազակ-ասպետների (Raubritter) համար մի առիթ էր, թէ իրանց քաջութիւնը վարժելու, թէ մի միջոց կայսերական հպատակութիւնից անկախ մնալու։

Հասկանալի է, որ Հռէնոսի ափերը գլխաւորապէս ասպետների բոյն լինելով, այս երկրի մէջ յառաջացել են հաղարաւոր աւանդութիւններ, որ բերանից բերան անցնելով, պահպանվել են և մինչև այժմեան ժամանակները։ Բայց սոցանից ամենաերևելին է այն, որ անբաժանելի կապած է Լորէլէյ (Loreley) լերան հետ,—մի սար, որ գտնվում է Հռէնոսի աջ ափին, և որ իր մեծութեամբ և գեղեցկութեամբ գերազանցում է ափերին եղած բոլոր մնացած լերները։ Ըստ աւանդութեան այս սարի գագաթին բնակում էր մի ժամանակ մի գեղեցիկ Լորէլէյ անուանած կին, որ ճանապարհորդին դէպի իւր բնակարան յանդուցանել էր աշխատում, բայց վերջը, միայնակութիւնից և տարփանքից մաշվելով, ինքը զինքը սարի բարձրութիւնից Հռէնոսը գահավիժեց։ Այս աւանդութիւնը բազմաթիւ բանաստեղծների ուշադրութիւնը գրաւեց և շատ նկարագրութիւնների նիւթ դարձաւ, որոնցից ամենաերևելի է անկասկած Հէյնրիխ Հէյնէի „Loreley“ երգը։

Լորէլէյ սարի շրջակայքը այնքան գմայլիչ են, որ ճանապարհորդը, որքան անգամ տեսած և լինի նա այդ տեղերը, ամեն անգամ դոցա մօտենալով, սպասում է անհամբերութեամբ որ վերստին տեսնի՝ նորա շունչը կտրվում է ոգևորութիւնից։ Բայց անցանք Լորէլէյ, և յանկարծ Հռէնոսը, որ այդտեղ երկու ժայռից սեղմած, առանձին արագութեամբ է վազում, ահագին լայնութիւն է կազմում, տափակ երկիրը մտնելով։ Լիացած աչքին ներկայանում են երկու ափերին երկու զուարթ փոքրիկ քաղաքներ՝ Սան Գոար և Սան Գոարսհաուզէն...։ Միայն ժէնէվի լճակի հոյակապ եզերները կարող են համեմատվել այս գեղեցիկ

Բայց բնութեան գեղեցկութիւնները նկարագրելու համար հարկաւոր է մի Ժորժ Սանդի կամ մի Ցուրգենէվի գրիչը...։

Միջին դարերումը աւազակ-ասպետներին և ազնուականներին ընդիմադրելու, նոցա զօրութիւնը և կամայականութիւնը զսպելու համար, Գերմանիայի մէջ կազմվեցան քաղաքների դաշնակցութիւններ։ Այսպէս կայացան՝ „Հռէնոսյին քաղաքների դաշինքը“ Հռէնոս գետի ափերումը, ուրիշները Գերմանիայի հարաւումը, բայց ամենանամեծ նշանակութիւն ստացաւ Գերմանիայի հիւսիսային քաղաքների „Հանզա“ դաշինքը, որ փոքր առ փոքր իր մէջ ամփոփեց բոլոր նշանաւոր ծովային քաղաքները և յառաջացնելով ընդհանուր առևտրական և քաղաքական օգուտներ, պատճառ դարձաւ այս քաղաքների ծաղկման և բարգաւաճման։ Հանզային պատկանում էին նոյնպէս Բռէմէն և Համբուրգ մեծ քաղաքները, որոնք հետզհետէ զանազան հպատակութիւններ ընդունել ստիպվելով, *) վերջապէս „ազատութեան պատերազմներից“ (Freiheitskriege) յետոյ, 1814

*) Բռէմէն քաղաքը Շվէդացիներին տրվեցաւ երեսնամեայ պատերազմից յետոյ. 1719 թուին,

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГОС. БИБЛИОТЕКА ՀՍՍՌ-Արմ ССР

համար մեծ նշանակութիւն ունի ապագայ ուսման համար:

Խօսենք ընդարձակօրէն վերոյիշեալ առարկաների ամէն մինի վերայ:

1) **Մայրենի լեզուի ուսուցումը** տարիքութիւնը տալիս է ամենահարկաւոր նիւթ երեխայի զարգացման համար: Ի հարկէ սորա համար հարկաւոր է յարմար ընթերցանութեան գիրք, որ առաջնորդէր երեխային աստիճանաբար անզգալի կերպով պարզից դէպի բարդը, հեշտից դէպի դժուարը, և կարողանար տալ ուսուցչին բաւականին լայնիւթ իւր խօսակցութիւնների և բացատրութիւնների համար:

Ընկատողութիւն. Յաւելմունք, որ Ուշինսկու գեղեցիկ ձեռնարկ „Родное слово" 2 մաս, որոնցից առաջին մասը արդէն մեզանում տպուել է *) երկրորդը պատրաստ է տպագրութեան, չենք կարող ուղղակի ձեռնարկ առաջարկել, մանաւանդ սկզբում: Այդ գիրքը, ունենալով ուսուցչի համար մեծ պէդագոգիական նշանակութիւն, մեզանում կորցնում է բոլորովին այդ իրան յատկութիւնը այն պատճառով, որ աշակերտները սկզբում ողջ վեց ամիս սովորելով դրա վերայ, ոչ մի նկատողական զարգացում չեն ստանում: Այդ գիրքը մինչև աշակերտները նկատողական եղանակով չեն սովորել գրել կարդալ, չ'պէտք է գործածվի իբրև դասագիրք: Փորձված ուսուցչից է կախուած, թէ ինչպէս պէտք է գործը այնպէս առաջանի, որ **նկատողական ուսումը իրան ճանապարհից չի շեղուի**, որովհետև եթէ սկզբում սկսվի վերացական անմիտ բառերի ուսանելը, այնուհետև շատ դժուարութիւնների պէտք է հանդիպի ուսուցիչը, մինչև որ աշակերտը ուղղվի, որովհետև աշակերտը կարդում է նոցա համար, որ հասկանայ և ոչ թէ լոկ բառեր սովորի: **Կարդալ գրել սովորելուց յետոյ**, մեր բոլոր դասագրքերի մէջ երեխաների համար, այդ գիրքը կարող է լինել գեղեցիկ ձեռնարկ, եթէ միայն ուսուցիչը հետևի խակ և խակ Ուշինսկուն և զգոյշ ընտրութիւն անէ կարդալու նիւթերու մէջ, աշակերտների հասկացողութեանը յարմարվելով:

Ընկատողութիւն. 2. Ինչ որ կը վերաբերի պ. Տէր—Յակոբեանցի „Մայրենի լեզու" գրքին, մենք բոլորովին ճնշուակար ենք համարում իբրև ձեռնարկ երեխաների համար այդ գիրքը. և ոչ մի զարգացողական նիւթ, ինչպէս մենք նայում ենք այդ գործին, այդ գրքի մէջ չ'ենք գտնում: Ուրեմն այդ դասագիրքը ցանկալի կը լինէր եթէ դուրս հանվէր մեր ուսումնարաններից, որովհետև այդ գիրքը քիչով է զանազանվում մեր հին տեսարից, որի վերայ մենք ամէնքս մաշուել ենք: Պ. Տէր—Յակոբեանցը Ուշինսկու գրքի վերնագիրը (Родное слово—Մայրենի լեզու) իրան գրքի վերայ առնելով՝ մոլորեցրել է մտածում, որ մեզ հայերս և ինքը պ. Տէր—Յակովբեանցը տեսը հայանութեան պաշտպաններ ենք:

Կարդալ-գրելը (ա. բ...) պէտք է ուսուցանվի հնչիւնական մեթոդայով. Այս մեթոդայով երեխաները 2—3 ամսում սկսում են արդէն բաւական լաւ կարդալ և գրիչ արագրել: Եթէ տարրական ուսումնարանի ընթացքը լինի 2 տարվայ, այն ժամանակ երեխաները պէտք է կարողանան կարդալ բոլորովին անսխալ, արագ և հասկացողութեամբ: Նոքա պէտք է կարողանան կարդացածը յետ պատմել, պէտք է կարողանան նմանապէս նրանց առաջարկած նախադասութիւններին դրաւոր համառօտ պատասխաններ տալ, միայն կատարեալ նախադասութիւններով:

Ուղղագրութեան համար պէտք է շաբթէնը երկու երեք անգամ գրել տալ թելագրութիւնով:

2) Հաշիւ. Գրուբէի մեթոդայով *) քարերի, խորանարդների etc միջնորդութիւններով:

Հարկաւոր է հաշուել տալ և համարիչի վերայ:

3) Ընկատողական—գիտողական ուսումը: Ընկատողական կրթութեան վերայ ընդհանրապէս մինչև հիմայ մեզանում ուշադրութիւն չեն դարձրել: Այդ դասատուութիւնը մեզանում մինչև հիմայ ոչ թէ չեն մայրել, այլև մինչև անգամ գրականութեան մէջ չեն զարթեցրել դրա հարցը: Այդ մեզ համար բոլորովին նոր և անսովոր բան է, չնայելով որ այդ ուսումը պէտք է լինի ամէն ուսման հիմքը: Այդ բանը շատ լաւ են հասկացել զերմանական երևելի պետագոգները, Պէստալոցցին, Դիստերվէգը և նրանց հետևողներից ռուսաց պեդագոգ Ուշինսկին: Այն օրից, երբ մանաւանդ Դիստերվէգը մայրեց ու տրեց այդ ուսումը գերմանական ուսումնարանների մէջ, այն օրից վերջապէս սկզբնական կրթութիւնը ստացաւ իրան կատարեալ ուղղութիւնը և հասաւ այն աստիճանին, որին նա պէտք է հասնէր: Այն օրից տարրական ուսումնարանները սկսեցին աստիճանաբար ազատուել չոր ու ցամաք սրտամաշ և ճնշող սխոլաստիքական և կղերիքական ուղղութիւնից: Հիմայ բոլոր գերմանական ուսումնարաններում թագաւորել է այդ վարժումը:

Ընկատողական ուսումը Մայրենի լեզուի հետ երեխաների զարգացման գլխաւոր միջոցն է: Ընդունակ ուսուցիչը նրա մէջ կը գտնէ անսպառելի նիւթ. նա կարող է ձեռք տալ բնական գիտութեանը,—կենդանիները, տունկերը և հանքերը ցնցելով, ֆիզիկական—բնութեան զանազան երևոյթները ցնցելով. պատմութիւնը և աշխարհագրութիւնը (հայրենագիտութիւն), ուսուցանելով իրան հայրենիքը, քաղաքը և այլն: Բացի սորանից նաև գիտողական ուսումը զարգացնում է երեխաներին ուղիղ դատելու ու իրենց միտքը պարզ կերպով արտայայտելու:

4) **Ընկարչութիւնը և գծագրութիւնը** քառակուսի խազերի միջոցով ուսանելով, ձեռնտու են փոքրիկ երեխաներին ձևակերպել կեանքից վեր առած առարկաներ և զանազան երկրաչափական ձևեր: Թէ որքան օգտաւէտ է գործնական և ճաշակագիտական հայեացքով նկարագրել իմանալ, էլ խօսել հարկաւոր չէ:

Ահա համառօտապէս այն պարապմունքները, որ պէտք է տան երեխաներին տարրական ուսումնարաններում: Մնում է ասել մի քանի խօսք **ուսումնական կազմակերպութեան և դասախօսութեան եղանակի** վերայ:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՆՈՒԻՈՒՑ

Ես իմ նամակների մէջ միայն տեղագրական և առևտրական ընդհանուր նկարագիրը հաղորդեցի Ձեզ ի բաց թողնելով ժողովրդի առ հասարակ վարքը ու բարքը, մտաւորական դրութիւնը. այդ պակասը լրացնելու համար համառօտապէս պիտի խօսեմ այստեղ առաջ թուրքերի վրայ որոնք բնակիչների մեծ մասն են կազմում, և յետոյ հայերի վերայ:

Թուրքերը երկու կրօնական ցեղից են—Սիւննի և Շիա կամ Ցաճիկ և Պարսիկ. այդ երկուսի մէջ տարբերութիւնը քիչ չէ և թէ կրօնական համոզմունքով և արարողութիւնով ջոկվում են միմեանցից. թողնելով խնդիրը թէ ինչումն է կայանում այդ երկու ազգերի կրօնքի հիմքը և իրարից տարբերութիւնը, ես միայն սա եմ կարևոր համարում ասել, որ Սիւննիի կրօնական համոզմունքը որքան էլ ազատ և մօլեռանդ լինէր. այնուամենայնիւ քիչ չէն շատ աւելի հերոսական է դէպի օտար ազգութիւնները. Ցաճիկը չի խորշում քրիստոնէի հետ նստել վերկենալու, թէյ խմելու և հաց ուտելու (բացի խմիչք և խոզի միս գործածելուց). իսկ պարսիկը խորշելով այդ բոլորից սրբապղծութիւն է համարում քրիստոնէի հետ նստել վեր կենալը անգամ. թէ և այդպիսի խստութիւն ճշտութիւնով չեն կարողանում պահել այստեղ, որովհետև հայերի հետ յարաբերութիւններ ունենալու ստիպուած են և ակամայ յանձն են առնում, բայց ովոր եղած է պարսկաստանի քաղաքներում, տեսած է անչուշտ պարսիկների այդ տմարդի ծիսապաշտութիւնը.

Այդ երկու ազգութիւնները միմեանց հետ միշտ կրօնական թշնամութիւններ ունին և այդ թշնամութիւնները աւելի սոսկալի կերպարանք են ստանում պարսիկների այն զզուելի ծիսակատարութեան ժամանակ, որը Մուհարրէմի սուգի օրեր է կոչվում. Այդ բարբարոս արարողութիւնը ցոյց է տալիս դոցա կրօնքի խաւար և վերջին աստիճանի ֆանատիկ լինելը. Այդ օրերին քիչ է պատահել որ մէկզմէկու վրայ են յարձակուել և այս պատճառաւ քաղաքական իշխանութիւնը զօրեղ միջոցներ է գործ դնում այդ հանդէսի ժամանակ խռովութիւն չպատահելու համար.

Դարձ ունին իրենց համար մէչէտ առանձին և մէչիթի կողքին ցած, սև պատերով մի երկու սենեակ կան չինած, այդ է նոցա ուսումնարանը, եթէ այդ անունը կարելի է տալ. Այստեղ սովորեցնում է մոլլան ճպօտը ձեռին աղաղակների և վէվէրկների մէջ խլամական մատաղ սերնդին գարեւոր ֆանատիքական և ատելորդապաշտական գաղափարներով...

Աւելորդ է ասել, որ թուրքերի կանայք, ենթարկուած լինելով փակուած կեանքին, մնացած են սարուկ և խաւար ինչպէս իրենց մարդիկը.

Գանք հայերին.

Թուրքերը խանութեան ժամանակ եղած են ներգործող ոյժը թէ հայի բնաւորութեան և կեանքի վերայ. այդ բանը, ինչպէս և ուրիշ տեղերում յայտնի երևում է և այստեղ. Հայը չի շարժվում հասարակական կեանքով, նա իր ընտանիքից զատ էլ ոչինչ չի նկատում, նա ապրում է միայն իրեն համար—այդ է մեր հայերի ընդհանուր ախտը, այդ է մեր դժբաղդ դատակնիքը.

Բարեբաղդաբար կայ Նուխուայ մէջ մի հոգևոր հայոց ուսումնարան, այդտեղ միայն սովորեցնում են հայերէն և ռուսերէն լեզու, կրօնագիտութիւն և վայելչագրութիւն և փոքր ինչ թուաբանութիւն, կայ նոյնպէս տէրութեան ծախքով հիմնած մի գաւառական ուսումնարան և սովորեցնում են այստեղ Ռուսերէն, Հայերէն և թուրքերէն և մի քանի առարկաներ թուաբանութեան աշխարհագրութիւն, Սակայն պէտք է ասել որ այդ ուսումնարանները չեն կարող յառաջացնել մի բան և չեն կարող յառաջադիմել, որովհետև ժողովուրդը առհասարակ անհոգ է մտաւորական զարգացման վրայ, և նա չի հասկանում այդ անհրաժեշտ պիտոյքը որովհետև բացի նիւթական շահից նորա համար ուրիշ շահ չկայ. Մոռացայ յիշել որ Նուխուայ մէջ երկու Հայոց եկեղեցի կայ և մէկն էլ Ռուսաց.

Իսկ աղջկերանց համար ուսումնարան չկայ, որովհետև մեր հայերի խնայասիրութիւնում այսպիսի մի միտք է տիրապետում—„թէ աղջիկը ինչ, ուսումն ինչ.

Ցոյս ունիմք որ այն նոր տարին առնոգուտ չի անցնիլ Նուխեցւոց համար և զարթնելով իրենց մտաւոր թմրութիւնից հոգս կը քաշեն իրենց որդոց մտաւորական և բարոյական կրթութեան վերայ լաւ հասկանալով այս խորհրդաւոր խօսքերը թէ այնտեղ է փողը, հարստութիւնը, արժանաւոր պարծանքը, որտեղ կան այս երկու աշխարհաշէն բարիարարները—ուսումը և դասատարակութիւնը.

1873. 5 յունվար Մ. Գ. Աղանեան

Ց. Գ. Լսում ենք որ մի քանի երիտասարդներ դիտաւորութիւն ունին այստեղ մի ընթերցարան բաց անելու. ցանկանում ենք կատարեալ յաջողութիւն այդ նոր շարժումին.

ՆԱՄԱԿ ԳԶԼԱՐԻՑ

Գզլարի բնակիչները, ինչպէս խօստացել էի անցեալ նամակումս, այս անգամ կամենում եմ խօսել Գզլարի միւս բնակիչների մասին, որոնք են՝

1. Գրացիք. Սորա թիւով մօտ երեսուն տուն են, բայց ինչպէս երևում է, առաջ աւելի շատ են եղել. Քաղաքից փոքր ինչ հեռի կայ մի գերեզմանատուն, որ Հայերը անուանում են „վրացի

Գէորգ I, Անգլիայի թագաւորը, մի միլիոն թալէր (ռուբլ) վճարելով Շվեդիային, առաւ Բրէմէն քաղաքը և դարձրեց Հանովէրի թագաւորական տան (ցեղի) սեփականութիւն. Վերջապէս Նապոլէոն I-ը, իր նուաճումների ժամանակ, միացուցեց Բռէմէն և Համբուրգ քաղաքները Ֆրանսիային.

*) Մայրենի լեզու, առաջին մասը աշխատասիրութիւն Ն. Տէր Ղևոնդեանցի.

*) Գրուբէի մեթոդան այնքան յայտնի է, որ աւելորդ ենք համարում երկարաբանութիւն անելը.

թէն կրկին ազատ քաղաքներ (Freistadt) դարձան, իրանց սեփական կառավարութիւն (ծերակոյտ) յորինելով.

Այս երկու քաղաքները Վիէննայի ժողովից յետոյ (1814-15) ազատ դառնալով, վերանորոգած Հանովէրի թագաւորութեան կողմից ստիպվեցան միմեանց մէջ եղած առևտրական կապը կտրելու. Հանովէրի թոյլ կառավարութիւնը իր համար վնաս համարելով եթէ Համբուրգի և Բռէմէնի պէս երկու մեծ քաղաքներ, ձեռք ձեռքին տուած, ընդհանուր օգուտներին ձգտէին, աշխատում էր նոցա առևտրական պայմաններին վնասել, արգելք գնելով նոցա միմեանց հետ անմիջական յարաբերութիւններին. Եւ յիրաւի Համբուրգը, Գերմանիայի ամենամեծ առևտրական նաւահանգիստը, նեղին գաւառների հետ միայն մի երկաթուղով էր կապած—Բէրլինի հետ.

Գէորգ I, Անգլիայի թագաւորը, մի միլիոն թալէր (ռուբլ) վճարելով Շվեդիային, առաւ Բրէմէն քաղաքը և դարձրեց Հանովէրի թագաւորական տան (ցեղի) սեփականութիւն. Վերջապէս Նապոլէոն I-ը, իր նուաճումների ժամանակ, միացուցեց Բռէմէն և Համբուրգ քաղաքները Ֆրանսիային.

բաւի հետ յարաբերութիւնները շատ դժուար էին.

Այդ է պատճառը որ Համբուրգի առևտրի մեծ մասը կենդրոնացած էր միայն Գերմանիայի արևելքումը և կամ արտաքին էր, այսինքն վաճառքը հանվում էին այլ երկիրներ՝ Ֆրանսիա, Անգլիա, և այլն և կամ ապրանքը Հնդկաստանից գալով, ուղարկվում էր Ամերիկա և փոխադարձաբար.

Միայն 1866 թվից, երբ Հանովէրի թագաւորութիւնը Պրուսիայի մի գաւառ դարձաւ, Համբուրգցիքը կարողացան իրանց վաղուց ցանկացած գիտաւորութիւնը իրագործել,—մի երկաթուղու կամուրջ չինել Էլբա գետի վերայ և նաւահանգիստը անմիջապէս կապել երկաթուղով արևմտեան և հարաւային Գերմանիայի և Ֆրանսիայի հետ. Այժմ ահա այս կամուրջը վերջացրած է և երկաթուղին բացվեցաւ.

Որքան օգտաւէտ էր Համբուրգին այս նոր ճանապարհը, արդէն նորանից կարելի է եզրակացնել, որ քաղաքը այս վերջին տարիները, աչքի առաջ ունենալով կամուրջի չինուելը, անչափ ընդարձակուեցաւ. Եթէ մի մարդ այս քաղաքը քանի մի տարիից առաջ տեսած լինէր, հաղիւ կարող է այժմ

նորան կրկին ճանաչել՝ նոր երկաթուղին առիթ տուեց նոր նաւահանգստի չինութեանը, որ անմիջապէս երկաթուղու կայարաններին է հանում իր նոր շքեղ և մարգաչատ ծովեզրով (quai). Այս չինութիւնները այն յարմարութիւն ունեն, որ նաւով հասած վաճառքը կարող են իսկոյն երկաթուղու կառքերի մէջ դարսվել, որի համար ծառայում են յիսունից աւելի բարձրացնող չոգէմէքէնաներ. փոխադարձաբար, երկաթուղով բերած ապրանքը նոյն հեշտութեամբ նոյն մէքէնաների միջոցով դարսվում է նաւերի մէջ.

Նոյն ինքը քաղաքն էլ բոլորովին այլ կերպարանք ստացաւ՝ նոր արձակ փողոցներ, գեղեցիկ տներով տարածվում են քաղաքի կենդրոնից, Բորզայից մինչև նոր երկաթուղու կայարանը և նաւահանգիստը.

Բնակիչները այլ ոգի ստացան՝ պահպանելով իրանց առաջվայ գովելի բնաւորութիւնները՝ աշխատասիրութիւնը և հիւրասիրութիւնը, նոքա կարծես աւելի ուրախ սրտով են աշխատում, յուսալով աւելի շահ և օգուտներ.

Հաղիւ թէ կայ ամբողջ Գերմանիայումը Համբուրգի պէս հարուստ քաղաք. Նորա թատրոնները անցած դարուց Լէսսինգի ժամանակից սկսած, ունեցել են միշտ մի առանձին հեղինակութիւն. Նկարչութիւնն էլ Համբուրգի մէջ սկսում է կատարելագործվել նոր հիմնված մուղէումի շնորհով. Գիտութիւնները և գրականութիւնն ես իրանց ներկայացուցիչներ ունեն այդ առևտրական քաղաքումը. Բանաստեղծներից, որոնցով պարծենում է Համբուրգը, բաւական է եթէ յիշեմ ժամանակակից վիպասան Թէոդոր Ստորմին (Theodor Storm), որի գեղեցիկ բանաստեղծութիւնները և վեպերը ամենայն համակրութեան արժանի են, Ցիշենք և պ. Ադոլֆ Ստրոդտմանին (Adolf Strodtmann) որ յայտնի է իր աշխատասիրած Հէյնէի և Գոդֆրիդ Կինկէլի կենսագրութիւններով և նմանապէս անգլիական և դանիական լեզուից աղող թարգմանութիւններով.

Հասարակական և մտաւոր ազատութեան հետևանքն էր, որ Համբուրգի մէջ չը կայ տարբերութիւն քրիստոնեաների և հրէաների մէջ՝ ամենքը վայելում են հաւասար ազատութիւններ և իրաւունքներ.

Համբուրգ. հոկտ. 1872 Անդրէաս Արծրունի